

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում ներկայացված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Վերապահումով կարծիքի հիմքեր

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված 86 միլիարդ ՀՀ դրամ (2023: 98 միլիարդ ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների գծով առկա է արժեզրկման հայտանիշ: Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություն 12-ում, Ընկերության հիմնական միջոցների գծով 2017 դեկտեմբերի 31-ին ավարտված տարում ճանաչվել է 6.2 միլիարդ դրամ գումարի չափով արժեզրկում:

Մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված արժեզրկման գնահատման ճշտության վերաբերյալ, ինչպես նաև անկարող էինք ինքներս գնահատել հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը՝ ներառյալ արժեզրկման և մաշվածության հաշվարկի նպատակով կիրառվող օգտակար ծառայության ժամկետների գնահատականները հաշվետու ամսաթվի դրությամբ՝ Ընկերության հիմնական միջոցների և գործունեության առանձնահատկությունների պատճառով: Հետևաբար մենք անկարող էինք որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների գծով հնարավոր արժեզրկման գումարը:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված պաշարների կազմում առկա են 3.9 մլրդ ՀՀ դրամ (2023: 3.0 միլիարդ ՀՀ դրամ) ընդհանուր արժեքով պաշարներ, որոնց շարժի վերլուծությունը վկայում է այն մասին, որ կարող է անհրաժեշտ լինել դրանց ինքնարժեքի նվազեցումը մինչև իրացման գույք արժեք:

Ընկերության ղեկավարությունը չի իրականացրել նշված պաշարների իրացման գույք արժեքի գնահատում, հետևաբար մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված պաշարների արժեքի և համապատասխան ծախսերի գումարի վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրի (ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԵՄՍԽ կանոնագիրը), և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի

նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ղեկավարությանը և կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկի (ՎՇԲ) միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM Վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, և ՀՀ ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016թ. հունիսի 22-ին ստորագրված ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Ընկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն, և չտրամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Ընկերության հիմնական գործունեության՝ Էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով, 2024 դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է նշված վավերապայմանը:

«Բի-Դի-Օ» ՍՊԸ-ն, FCCA

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն



C. Skol

Սերգեյ Յակովլև, FCCA
Աուդիտի գործընկեր

21 Ապրիլ 2025
Երևան